Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության հուլիս ամսվա անցուդարձի մասին:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՅԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Ուրախությամբ հայտնում ենք, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը մեկնարկել է «Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի կայացում» ծրագիրը:
Այս ծրագրի իրականացմամբ մենք ցանկանում ենք Հայաստանում երիտասարդական աշխատանքը հասցնել զարգացման նոր մակարդակի:
Նպատակն է՝ նպաստել Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի (ԲԵԱ) կայացմանը՝ ոլորտային դերակատարների կարողությունների զարգացմամբ և միջսեկտորալ համագործակցության խթանմամբ:
Ծրագիրն իրականացվելու է Գյումրիում, Վանաձորում և Երևանում:
Հետևեք մեր նորություններին: Մանրամասների ու գործողությունների մասին կտեղեկացնենք լրացուցիչ:

Y!C YOUTH INITIATIVE CENTRE

ԵՆԿ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱԿՈՒՄԲ

Հուլիսի 1-ին մեկնարկեց անգլերենի սկսնակ և միջին մակարդակի ակումբները:
Սկսնակ մակարդակի ակումբավարներն են Անժելա Գրքիկյանը և Աննա Մարտիրոսյանը, իսկ միջին մակարդակինը՝ Սյուզաննա Պետրոսյանը և Նեյթըն Գրեհեմը:
Ակումբի մասնակիցներին մաղթումենք արդյունավետ ու հետաքրքիր աշխատանք:

UPSHIFT ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՑՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի թիմերն այս ամիս ավարտեցին իրենց ծրագրերը)))

«Gyumriver» թիմ

Հուլիսի 6-ին և 7-ին Gyumriver թիմն իրականացրեց Գյումրի գետակի մաքրում՝ Ավտոկայարան, « Ձորի մայլա» և Միեր Մկրտչյանի փողոցին հարակից գետակի տարածքներում:
Թիմին էին միացել Գյումրու քաղաքապետարանի աշխատակիցները, թիվ 1 ավագ դպրոցի ուսուցիչները և աշակերտները, Գյումրիում Եվրոպական կամավորական ծառայության և Խաղաղության կորպուսի կամավորները և մի շարք այլ երիտասարդներ:

«Էկոլոգիապես մաքուր տոպրակներ» թիմ

Հուլիսի 7-ին տեղի ունեցավ «Էկոլոգիապես մաքուր տոպրակներ» ծրագրային գաղափարի «3+2» թիմի հանրային միջոցառումը, որի ընթացքում թիմն իրականացրեց թղթե և կտորե տոպրակների բաժանում: Տոպրակներին կցված էին թռուցիկներ, որոնց մի կողմում ներկայացված էր պոլիէթիլենային տոպրակների վնասակարությունը, իսկ մյուսում բացատրված էր թղթե տոպրակների պատրաստման ձևը:
Բաժանվող էկոլոգիապես մաքուր տոպրակները Գյումրվա բարբառով ու հումորով կոչեր էին պարունակում, օրինակ՝ « Մաքուր պահե քաղաքդ. Ապ՛» կամ « Առանց թունավոր գազերի օդ գուզենք»:

«Օքսիլիո» թիմ

«Ծառատունկ, թռչնաբներ և կերամաններ» ծրագրային գաղափարի Օքսիլիո թիմն Բագրատունյաց պուրակում իրականացրեց թռչնաբների և կերամանների տեղադրում:

«Համայնքը մեր ձեռքերով» թիմ

«Համայնքը մեր ձեռքերով» թիմն իրականացրեց ծրագրի ամփոփիչ միջոցառում: Նրանց համայնքային ծրագրի արդյունքում «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի բակում պատրաստվել է smart/խելացի աշխատանքային տարածք, որտեղ տեղադրվել է արևային էներգիայով սնուցվող սյուն, նրանց ձեռքով պատրաստված նստարաններ և սեղան:

GET A BIKE. GET A LIFE

ԵՆԿ ՀԿ-ի «Get a bike, get a life» սոցիալական ձեռնարկատիրության ծրագրի շրջանակում հուլիսից մեկնարկել են ժամանցային ու ճանաչողական հեծանվային արշավները տարբեր ուղություններով

Այսպես, հուլիսի 14- ին իրականացվեց առաջին հեծանվաարշավը դեպի Ախուրիկ գյուղի «տաք ջուր», գյուղի մոտ գտնվող լիճ և Ախուրյան գետ:

Իսկ հուլիսի 20-ին և 21-ին Մարմաշեն վանական համալիր, Ախուրյանի կիրճ, «Նադիայի լիճ», Արգիշտի Ա-ի արձանագրության մոտ:

Հաջորդ արշավները լինելու են օգոստոսին, հետևիր ծրագրի էջին և միացիր արշավներին:

Մենք միաժամանակ ակտիվացրել ենք Գյումրու ԵՆԿ ՀԿ-ի հեծանվասերների ակումբի գործունեությունն և հրավիրում ենք միանալ: Մանրամասները՝ գրանցման հայտում:

Իսկ նրանց համար, ովքեր չգիտեն հեծանիվ վարել, նշենք, որ սկսել ենք հեծանվավարության տեսա-գործնական դասընթացների շարք:

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Ուրախ ենք տեղեկացնել, որ Ֆրանսիայի Կան քաղաքում տեղի ունեցավ «CAUCAN – Counter and Alternative Narratives for Human Rights in the Caucasus» խորագիրը կրող աշխատանքային այցը:
Հայաստանից ծրագրին մասնակցեցին՝ ԵՆԿ-ից Մարիամ Հակոբյանը և Սյուզաննա Պետրոսյանը, Ջինիշյան հիշատակի հիմնադրամից Մելինե Շախնազարյանը:

Ինչպես նաև այս ամսվա ընթացքում ունեցել ենք երեք ծրագրի հնարավորություն Էրազմուս+ ծրագրի շրջանակներում, որոնցից մեկը միջազգային դասընթացն էր երիտասարդական աշխատողների համար Լեհաստանի Վրոցլավ քաղաքում, հաջորդը միջազգային երիտասարդական փոխանակման ծրագիրն էր բնության թեմայով Իտալիայի Տրամոնտի քաղաքում և միջազգային դասընթացն էր կամավորների համակարգողների համար Լեհաստանի Պոզնան քաղաքում:

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ

Հուլիսի 17- ին Գյումրու « Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հրավերով Գյումրի այցելեցին Եվրախորհրդի երիտասարդական քաղաքականության խորհրդատվական առաքելության փորձագիտական խմբի 5 հոգանոց պատվիրակությունը և հանդիպումներ ունեցան Գյումրու քաղաքապետի, Շիրակի մարզպետի, տեղական երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Այցի նպատակն էր աջակցել ՀՀ իշխանություններինմասնավորապես ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ՀՀ երիտասարդական դաշտի կատարելագործման և Հայաստանի ազգային երիտասարդական ռազմավարության վերանայման համար Եվրոպայի խորհրդի նորմերի ու ստանդարտների հիման վրա առաջարկների պատրաստման հարցում:
Նրանք այցելեցին նաև Գյումրու «Երիտասարդների տուն» բաց երիտասարական կենտրոն, որտեղ ծանոթացան նրա գործունեությանն ու առօրյային:

ՀՈՒՇԱԳԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հուլիսի 18-ին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիԿենտրոն» ՀԿ-ի և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի միջև ստորագրվեց փոխըմբռման հուշագիր երիտասարդության ոլորտում համագործակցության վերաբերյալ : Փաստաթուղթը ստորագրել են ԵՆԿ ՀԿ-ի նախագահ Արթուր Նաջարյանը և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հասմիկ Հարությունյանը
Հուշագրի նպատակն է օժանդակել կողմերի միջև համագործակցության ամրապնդմանը՝ տրամադրելով ուսումնականհաստատության ուսանողներին և դասախոսական կազմին հնարավորություն՝ մասնակցելու ԵՆԿ ՀԿ-ի կողմից իրականացվող միջազգային ծրագրերին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2019թ. հուլիսի 30-ին տեղի ունեցավ Եվրոպական Միության «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագրի շրջանակներում Սլովակիայից Գյումրի ժամանած Յոզեֆ Բանյասի հրաժեշտի ոչ-ֆորմալ հավաքույթը:
Ժոզեֆը տասն ամիս շարունակ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիԿենտրոն» ՀԿ-ում ներգրավված է եղել հանրային կապերի աշխատանքներում, զբաղվել է «Ուրբաթօրյա սրճարանի» կազմակերպման աշխատանքներով, ԵՆԿ-ում և Երիտասարդների տանը վարել է «Լուսանկարչության և տեսանյութերի պատրաստման ակումբ», Բավրայում անցկացրել է անգլերենի ակումբ, պատրաստել է ԵՆԿ-ի ամսական տեսնյութերը և այլն:
Հավաքույթի ընթացքումԵԿԾ համակարգող Մարիամ Ղարագյոզյանի կողմից Յոզեֆին հանձնվեց շնորհակալագիր և YouthPass հավաստագիրը՝ իրականացրած կամավորական աշխատանքի համար:

Հուլիս ամսին ունեցել կարճաժամկետ Եվրոպական կամավորական աշխատանքի հնարավորություն Լեհաստանի Պոզնան քաղաքում:

GLOW ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ

Սպիտակի GLOW ցերեկային ճամբարը, որը տեղի ունեցավ հուլիսի 22-26-ը՝ Սպիտակի ԵՄՔԱ ՀԿ-ում:

Ճամբարն իրականացվեց Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի և Ամերիկյան խաղաղության կորպուսի կամավորների կողմից՝ Սպիտակի ԵՄՔԱ ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Ճամբարին մասնակցում էին 20 աղջիկներ Սպիտակ, Լեռնանցք Սարամեջ և Ջրաշեն համայնքներից, ովքեր հնարավորություն ունեցան բացահայտելու և զարգացնելու իրենց առաջնորդական հմտությունները, մշակելու իրենց համայնքի կարիքներից բխող ծրագրեր և խորացնելու գիտելիքները աշխարհահռչակ կանանց վերաբերյալ, ովքեր ավանդ են ունեցել կրթության, գիտության, բնապահպանության, մարդու իրավունքների և այլ ոլորտներում:
Հաջորդը Մեղրին է լինելու: